

ՀԱՏԻԱԾՆԵՐ ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(ՄՈՍԿԻԱՅԻՑ)

ՇԻՏԱԿԵԱՆԻ

I

«Մուրճի» ընթերցողին։— Իմ Յիշատակարանը, — Հատածներ այդ Յիշատակարանից։ — Եսական առատածեղնութիւն եւ հասարակական ժլատութիւն։— Մայրաքաղաքի հայկուհին։ — Գլխի, ձեռքերի եւ կրծքի արժէքը։— Երեւելի հարսանիք։— Ղարաբաղ-ցին, Զօկը, Արմաւիրցին եւ այլն եւ Մեծն Նապօլէօնի ■ երւի գը։— Կուշտ ճառեր եւ քաղցած որբեր։— Վարդանանց տօն եւ դիմակահանդէս։— Իմ խոստումը։

«Մուրճի» սիրելի ընթերցող։ Այսքան ժամանակ լուռ էի և ոչինչ չէի գրում աչս աշմկալից մալրաքաղաքի կեանքից ոչ թէ աչն պատճառով, որ գրելու նիւթ չունէի։ Ոչ ալ ծուլութիւնն էր իմ ձեռքը կապում։ Իսկ Դուք լաւ գիտէք, որ մենք հալերս լաւ բան անելում միշտ ծուլ ենք... Միծաղելի կը լինէր հաւատացնել, որ աչս բազմամարդ և բազմադարձ քաղաքը գրելու նիւթ չի տալիս։ Հալերս մի ասացած ունենք. «Գեղի ինչն է շատ—ձուն»։ Նոյնը մի քիչ ալլափոխած՝ կարելի է ասել նաև աչս-տեղի կեանքի մասին. «Մոսկւալի ինչն է շատ—գրելու նիւթը»։ Մալրաքաղաքն ընդհանրապէս և աչստեղ բուն Դրած հալ գաղութի կեանքը մասնաւորապէս ձեզ համար հեղաքրքրական շատ բան կարող է ներկայացնել, ընթերցող։ Մանաւանդ հալ գաղութը, որը համ սրտիդ մօտ է, համ էլ անտարակուս, գովասանքներ շատ էք լսած աչ գաղութի մասին։ Չէ որ ասած է. «Սազի ձէնը հեռւից միշտ անուշ է լսում»։ Չգիտեմ, ինչ է եղել աչ հալ կոլոնիան առաջ. իսկ ինչ վերաբերում է աչ վերջին տարիներին, նրա ալժմեան կեանքին, պէտք է խոստովանած, որ գովելու շատ քիչ բան կալ. իսկ եթէ հաւատարմութիւն լինեմ իմ մի բարեկամին, որ ահա 15 տարի է ապրում է աչստեղ, նրա ասելով՝ «Մոսկւալի հալ կոլոնիան փոխել է միաչ քանակութեամբ, աչսինքն՝ աւելացել է. իսկ որակութեամբ «գելէն

Պիկոն է, զեկէն կիկոն»։ Ասենք, քանակութեամբ աւելանալը ես էլ եմ նկատել այս մի 3-4 տարւոյ ընթացքում ապրելով այսօրեւ, բաց չա մի պարծանք չէ, ընթերցող, դրա պատճառը մասամբ բնութեան օրէնքն է... Իսկ գլխաւորս պէս ալն անգուսպ սէրն է, որ հալ ժողովուրդը, մանաւանդ նրա որոշ շասակարգը, զգում է շէպի շահախնդրական գաղթականութիւնը։ Հեշտ ու շուտ հարստանալու փափագը, գիտես որ, շատ անգամ հալ վաճառականին հալրենի երկրից ոտով Հնդկաստան է տանում։ Ասացի, որ Մոսկւայի հալ գաղութի կեանքում գովելու շատ քիչ բան կայ եւ իրաւ, զարմանալի ինքնապաշտութիւն, ինքնափափաշումն ամեն մի քաղաքի ու Անտարքտիկայի շէպի շրջապատող կարիքը, աւելի անտարբերութիւն շէպի հեռաւոր ցաւերը... Նրէկն աւսուրալ պէս, այսօրը վաշալ պէս, շարունակ նոն անբովանդակ, նոն «Դրսից շքե», ներսից տգեղ» կեանքը։ Ասածս, իհարկէ, չպէտք է վերագրել այսօրեւի նաև հալ ուսանող սերնդին, որ հալ գաղութի աշքի ընկնող մասն է կազմում եւ ուսման ծաւաւով չաւ է ալս կողմերը։ Մեր մէջ մնալ, ընթերցող, թէն ալթման հալ ուսանողութիւնն էլ մի գնդ չի եւ բաւականին սորոք է կանգնած իւր կոշման բարձրութիւնից, բաց էլի եթէ կեանք, շարժողութիւն կալ—ալդ տարրի մէջ է... Վերջապէս, ինչ երկարացնեմ, գրելու շատ նիւթ կալ եւ ահա ծուլութիւնս լալթելով սկսում եմ քեզ հետ իմ խօսք ու գրուցը։ Թէ ինչ ձեւով—ականջ դիր։

Ալս տարւալ սկզբից մի Յիշատակարան եմ շինել, որի մէջ ուզում եմ ընդրութեամբ արձանագրել ալն բոլորը, ինչ որ կատարում է իմ շորս կողմը. արձանագրել իմ տեսած ու լսածը, իմ տպաւորութիւնները, իմ խորհրդածութիւնները։ Յիշատակարանիս մէջ տեղ կը բռնէ ոչ թէ միալն քացառապէս տեւական հալ կոյոնիան իւր չարն ու բարիով, իւր սե ու սպիտակով, ալ եւ ընդհանրապէս մալրաքաշաքի կեանքը, որի մէջ, ինչպէս վերն ասացի, հեռաքրքրական շատ բան կալ։ Մոսկւան համարում է Ռուսաստանի սիրտը, նրա կեանքի զարկերակը եւ գէթ հարեանցօրէն ծանօթանալ ալդ սրտի բաբախումներին, ալդ երակի զարկերի հետ, նշանակում է գալափար կազմել համարեա ամբողջ օրգանիզմի մասին։ Հասարակական կեանք, մամուլ, գրականութիւն, գեղարեստ, բեմ եւ ալն—ալդ բոլորը Մոսկւայում ալնքան ճոխ ու լալնածաւալ են՝ համեմատած մերի հետ, իհարկէ, որ շատ բան են պարունակում իրանց մէջ եւ՝ օրինակելի, եւ՝ սլ-օրինակելի, եւ՝ խրատական, եւ՝ ոչ-խրատական հալերի համար։ Ինչ որ ալդ բոլորի մէջ ուշադրութեան արժանին է, ես կաշխատեմ, ընթերցող, ալս տարւանից կամաց-կամաց, գտնէ թուցիկ կերպով արձանագրել իմ Յիշատակարանում եւ ապա ամեն ամիս կամ երկու ամիսը մէկ անգամ

«Մուրճի» միջոցով և ֆեյլդէրոնների ձեռով հաղթածներ կը տամ ձեզ աչդ-
օրով հաղթածներին»

Առաջիմ աչդ հաղթածներն սկսում եմ Մոսկուայի հաղթի կեանքից՝
որովհետեւ ռուսական առածն ասում է. „Своя рубашка ближе къ телу“.

...Ասում ենք, հալը առադրածն չէ, կոպէկի համար հոգի է տալիս։
Աչդ բանի հետ ես համաձայն չեմ։ Դա հալի լատիանիչը չէ, Մեծ նշանա-
կութիւն ունեն տեղը, նպատակը և հանգամանքները։ Չգիտեմ, ինչպէս
են ուրիշ տեղերի հալերը, բայց ինչ վերաբերում է Մոսկուայի հալերին—
աչդ կարծիքն անխառն է։ Խօսքս, ի հարկէ, ունենորների մասին է,
որովհետեւ չունենորն ինչ տեղից ժլատ կամ առադրածն լինի։ Աւստի
ունենոր հալերը, որոնց թիւը հինգ ու տասը չէ, ոչ միայն առադրածն
են, այլ մինչև անգամ կարող եմ աւել, փողի արժէքը չգիտեն, նրանց
աչքում փողն ու հողը—մէկ է, փողը շաշ են տալիս հողի պէս։ Հալ հա-
լուտը փողը շաշ տալ հողի պէս... Այո, մի զարմանաք. հողի պէս Բալից...
Ահա բանն էլ հէնց աչդ «բալից»-ի մէջ է։ Աչքպէս են շաշ տալիս, որ աչդ
ոսկի աւազը միայն իրանց տան մէջ, միայն իրանց բերանն ու իրանց
ջանի վրա է թափում։ Անձնական բարեկեցութեան, սեփական փորի
պարարտութեան, փարթամ կեանքի համար Մոսկուայի հալ կրեստը ոչինչ
չի խնայում։ Այլ եթէ իր վրա շաշ տւած նրա ոսկի աւազից մէկ կամ մի
քանի հարկեր երբեքն ընկնում են հեռուոր կամ մերձուոր քաղաքի,
կարօտեալի բերանը—Դա պէտք է վերագրել պարահական քամուն և նա-
մանաւանդ աչն հանգամանքին, թէ աչդ քամին ո՞ր կողմից է փչում...
Յատուի է, որ երբ մոլթ տեղում ճրագ ես վառում, ճրագը իւր չորս կողմն
է լոյս սփռում, հեռուոր առարկաներ է լուսաւորում։ Իսկ իւր տակին լոյս
չի տալիս։ Այլ «ճրագն իր տակին լոյս չի տալ» ժողովրդական առածով
ընտրուելու լինինք աչնպիսի մարդկանց, որոնք կեանքի մէջ ուրիշի
Դարդն իրանց Դարդն են շինում, որոնք իրանց անձը մոռացած՝ ուրիշի
կարիքներին են ծառայում, հապա ալտոյի ունենորներին ուղղակի հակա-
պարկեր պէտք է համարել աչդ առածին։ Մոսկուայի հալ հարուստն աչն-
պիսի մի ճրագ է և թափած աչնպիսի ճարպից ու պարուրքից, որ միմիայն
և միմիայն իւր տակին է լոյս տալիս... Նա գիշեր-ցերեկ չուում է իւր
անձը, փաշտելու է իւր մարմինը։ Նա մարմնացած անձնական վաղելք է,
անձնական պարարտութիւն է։ Զոխ ուրեւ ու խմել, ճոխ հագնել, տնով-
տեղով, նիստ ու կացով լողալ փարթամութեան ծովում—նրա համար Դար-
նից մեծ խորհուրդ չկալ կեանքի մէջ։ Այլ աչնպիսի կենցաղի համար նա-
միշտ լալն բացած է պահում իւր հաստ քսակը, նա պարտաւոր է աչնպիսի
Դարածներում փաշտել իւր անզուսպ առադրածնութեամբ։ Ասկալն փոր-

ձիր մօտենալ նրա աչք խսկական առարածեռնութեան մի ալ ճպարակով, ծառայելիս ալն հասարակական պիտոյքներին. փորձ փորձիր աչք լիքը ջէբի օգնութեան դիմել թշուառի արդասուքով, տառապեալի աղետով— բաց ջէբն իսկոյն կը փակուի... Այս եթէ չադ զահլէն տանես, մալրաքաշաքի հալ կրեստը կը բանալ իւր ժիւղի (նա, ի հարկէ, եւրոպական հագուստ է հագնում) փոքրիկ, նեղաբերան զրպանը և երկու մատրի ծալերով մի բան հանելով՝ կը չպուրի երեսիդ, որ զլիսից ռալ լինես...

Եւ չին վերագրել մալրաքաշաքի հալ փողաւորների աննկարագրելի ճոխամոլութիւնը—չգիտեմ Գուցէ, մալրաքաշաքի կեանքն է վարակել նրանց աչք ախտով Բաց ջէբ որ աչք կեանքն ունի և ալ բազմաթիւ դրական կողմեր. ինչու աչք փակել աչք օրինակելի կողմերի առաջ: Բաց էլ. իմ կարծիքով, այստեղ կալ ներքին պատճառ. այստեղ կալ «տեսի» հոգեբանութիւն, կալ բուրժուալից աղնականութիւն ձգտելու, ազնականին նմանելու հոգեկան պրոցես, որն անքան փալուն գոյնիւրով նկարագրել է անմահ Մոլիէրը իւր Bourgeois Gentilhomme պիեսում: Բաց աչք բանը ես թողնում եմ հոգեբանների վերլուծութեան... Հոգեբանական խնդիրներով զբաղւելն իմ Յիշատակարանի ծրագրից դուրս է: Աս միայն արձանագրում եմ եղելութիւններն ու երևութները և նրանց ակներև պարկերները:

Մալրաքաշաքի հալ ունեորների հասարակական ժլատութեան, եսական առարածեռնութեան և մինչ հերքուլէսեան սլեների հասցրած փարթամասիրութեան օրինակները բազմաթիւ են: Այդ մոլութիւններում չալ ու սահման չգիտեն մանաւանդ մալրաքաշաքի ունեոր հալուհիները, որոնք գիշեր-ցերեկ մոդալով հարեցած՝ բւշի զալ չեն կարողանում...

Կրակոտ նժուգները ու բազմագոյն անիւներով շքեղ կառքեր, որոնցով կիւրակի օրերը կամ հանդիսաւոր տօներին լցած է լինում Մոսկալի հալոց եկեղեցու բակը. իշխանաւալել կացարաններ՝ աչք շլացնող արդ ու զարդով. սպիրակ ձեռնոցներ հագած լաքէլներ՝ ճաշի սեղան նստելու. կրակի գին արքնիմէնտներ իտալական օպերաներին. վերջապէս, անվերջ «քալեր» ու «վալերներ»... Այդ բոլոր դեղիւթիւնների նկարագրութիւնն իւր մանրամասնութիւններով մի կողմը թողած՝ բաւականանալք միայն երկու թարմ օրինակով:

Մօտ անցալում տեղի ունեցած Մոսկալի հալ ուսանողական երեկոյթին ընկերներիցս մէկը ծանօթացրեց ինձ մի հալուհու հետ, որ տեղական հալ կրեստներից մէկի աշխիւն էր: Սկսեցի հետը խօսել: Նոր ծանօթացած հալու-

հու հետ, որ մալրաքաղաքում սնած ու կրթած մի օրիորդ էր, խօսք բացարի զանազան նիւթերի մասին — ուսանողական նրեկոյթներ, թաղրոն, երաժշտութիւն, զեւարեստական ցուցանանքէսներ, գրականական նորութիւններ, հրապարակական շատախօսութիւններ, հաշ ուսանողութիւն, նրանիւթական կարիքները, նրա կոչումը մեր կեանքի մէջ և ալլն, և ալլն, իսկ երբ ներս մտանք արեւելեան ճաշակով զարդարած մի սենեակ, որի խորքում մի անկիւնը ներկայացնում էր հաշկական աւերակներ, և մալրաքաղաքի հաշկունին սկսեց դիտել ալի աւերակները, ևս ակնարկեցի վերջին տարիների ալիտներին, անթիւ որբերի ու գաղթականների վրա... խօսողն իսկապէս միայն ևս էր. ևս ուրիշ կերպ էլ չէր կարող լինել — „Даму должно занимать кавалеръ“, (շամալին պիտի զբաղցնի կաւալէրը) պնդում է ալտրեյ ամեն մի հաշկունի և բերանը ջուր առած՝ սպասում է, որ միշտ դու հարցեր տաս, միշտ դու խօսես. ևս էլ վարպետութեամբ նիւթից-նիւթ թռչելով և շարունակ հարց ու փորձ անելով իսկապէս ուզում էի մի լաւ թափ տալ ալի «քնքուշ տոպրակը», որ տեսնեմ, մէջն ինչ կար. Օ՛րդարկութիւն շարարկութեանց և ամենայն ինչ շարարկութիւն է... Մալրաքաղաքի հաշկունու բերանից լաճախ լսում էի միայն. „Да“, „Нѣтъ“, „Такъ себѣ!“ „Вы думаете?“, „Можетъ быть“, „Не интересовалась“... ամբողջ մի ժամաւ խօսակցութիւնից երկաց, որ նա անչափ սիրում է իրաւական օպերան, հրապարակական շատախօսութիւններին շեռ ոչ մի անգամ չէ եղած, գրականութիւնից քաջ ծանօթ է Մարսէլ Պրեկտի «կանտոնց նամակներին» և տանն սրանում են „Нива“ ու Քրանսիական մի քանի հատ պարկերազարդ հրապարակութիւններ. հաշ ուսանողներից ճանաչում է մի քանիսին միայն (չիտոյ վերասրուգեցի, որ նրա ճանաչածները չալտնի «ուսանող Քրանտներ» են): իսկ ինչ վերաբերում էր խելքին զօր տալու նիւթերին, հաշկունին ուղղակի խոյս էր տալիս խօսելուց կամ կարծիք չալտնելուց. միայն հաշկական ալիտների մասին թուռցիկ կերպով ասաց հետեւաւր. „Папа получает армянскую газету и онъ какъ-то за обѣдомъ говорилъ, что многое преувеличено“ (== Հայրիկս հաւց լրագիր է սրանում և մի անգամ ճաշին ասեց թէ շատ բան չափազանցած է): Այժմ անցնենք ալի շարարկ, բաց «քնքուշ տոպրակի», ալապէս ասած՝ արդաքին նախշին, միայն արեստական և ոչ բնական նախշին: Պէտք է խոստովանած, որ բնականով մալրաքաղաքի հաշկուններն ընդհանուր առմամբ բաւականին նախշուն են և վախելազեւ: Միայն, Տէր Աստուած, ինչ փաթեթամութիւն հագուստի. իմ խօսակից հաշկունին ոտից մինչև գլուխ թաշած էր դիպակի, ասրեշումի, բրիւէլեան հաշիւի, բազմերանգ ժապաւէնների մէջ. իսկ թանկագին քարերը հօ ծով աւազի նման չալ էին տրած վրան. Գարեք ձեռքերին քարեք կրծքին, քարեք ականջներին, քարեք գոտիից կախած ոսկէ փոքրիկ ժամացույցի վրա, քարեք ձեռքին

բռնած հովհարի փշուկրեայ կոթի վրայ... Մի խօսքով՝ կատարեալ ակնաւաճառի շարժուն խանութ։ Եւ որքան ինքնագոհութիւն հաշկուհու շէմքին, որքան պարծանք նրա ամեն մի շարժածքում։ Աչքիս տակով զննելով նրա աչք զարդարանքը, չգիտեմ թնչու, իմ միտքն ընկաւ մի բնագէտ գիտնականի (անունը մոռացել եմ) չափ սուր շիրտութիւնը, աչն է՝ որ ամենափմար թռչունները բնութեան մէջ ամենից նաչխուն ու փեղրազարդ են լինում։ Օրինակ՝ սիրամարգը։

Տխուր տպաւորութեան տակ բաժանեցի մալրաքաղաքում սնւած աչք հաշկուհուց և քթիս տակ մըմնջում էի՝ անմահ Գամառ-Քաթիկայի խօսքերը։

«Շուշան, չուրով շէմքը ծածկէ, ձիւն դու թւիր մրոտած,

«Տէս, սիգաճեմ ման է գալիս հայ աշիկը մեր կըրթած...»

Նկարագրածս հաշկուհին եզակի երեոյթ չէ։ Նոյնն են մալրաքաղաքի բոլոր ունեւոր «հայ խանութները»։ Ո՛ր օրիորդին, որ տիկնոջն առնէք, աչք չլացնող զարդարանքի համար հոգի է տալիս։ Լի օրն անգամ նա պարզ հագուստ չի ձանաչում։ Իսկ տօներին կամ բալելում հօ Ասորւած հեռու տանէ։ Թէ տարւայ ընթացքում որքան է վարնում մալրաքաղաքի հարուստ հաշկուհին իւր զարդարանքների վրա—աչք հաշկարարութիւնից եւ հրաժարում եմ։ Միայն ահա քնքուչ ձեռքեր, որոնք հազարներ արժեն, բայց ոչ իրանց կատարած բարի գործերով, ալ... Թանկադին մատաններով. ահա չքնաղ կրծքեր, որոնք տասնեակ հազարներ արժեն, բայց ոչ իրանց տակ թագուցած կարեկից, բաբախուն սրտերով, ալ... աշամանդէ թրոշներով, մարգարտէ շլթաններով. վերջապէս, ահա ճոխանք և գեղազանգուր գլուխներ, որոնք հարիւրներ արժեն, բայց ոչ իրանց մրածումներով ու խոկումներով, ալ... ծաղկաշար, փեղրազարդ գլխարկներով...

Այլ առակ լուարուք։ Նորերս Մոսկւաչում տեղի ունեցաւ մի երեւելի հաշկական հարսանիք։ Մի հարուստ հայ տղա պսակուում էր մի հարուստ հայ աշիկայ հետ։ Պսակէր ու պրծնէր էլի... Բայց ոչ պէտք էր աշխարհ զարմացնել պէտք էր ցոյց տալ, որ հայ հարուստը ժլատ չէ, որ փողը նրա աչքում հող է, երբ մէջտեղ անձնական հաճութիւն, եսական բաւականութեան խնդիր կա։ Եւ նա, իրաւ, ցոյց տուց ու զարմացրեց... իւր նմաններին։ Մինչև այսօր էլ որոշ չըջաններում խօսակցութեան և զարմանքի նիւթը աչք «երեւելի հարսանիքն» է։ Հարսանեաց խնջոյքը նշանակաւ էր Մոսկւայի ամենահուշակաւոր հիւրանոցում։ Հարսանիքին հրաւիրւած էր համարեա ամբողջ հայ կողմնիւն։ Շատ էին հրաւիրել, որ շատ զարմա-

նան, Հրաւիրածները թւումն էին և՛ ետ։ Երկար սիրտք էի անում զճամ թէ չգնամ։ Վճռեցի գնալ, որովհետև մտածեցի—եթէ ուզում եմ չիշատակարանիս համար նիւթ ճարել և ֆելլըրոններ գրել, պէտք է ամեն ծակ-ուծուկ մտնեմ, պէտք է արտոթելիւն ու անարտոթը մի կողմը թողնեմ և անորոտունջ կրեմ ֆէլլըրոնիստի լուծը։ «ЛЮБИШЬ КАТАТЬСЯ — ЛЮБИ И САНОЧКИ ВОЗИТЬ»։ Եւ չփողանցի, որ գնացի։ Մէկ չէ, քսան ֆելլըրոնի նիւթ կար աչք «երեսելի հարսանիքին»։

Նկարագրել յահլիճի լատուկ աչք օրւալ զարդարանքը, աչն սեղանի ճոխութիւնը, որի շուրջ պէտք է բազմէին հարս ու փեսան իրանց բազմազան և բազմազոն հւրերով, նկարագրել աչն հագուստների հարստութիւնը և աշամանդների առադութիւնը, որոնցով զուգւել ու կոկւել էին մալրաքաղաքի հաւկուճիները, մեղքս ինչ պահեմ—իմ գրիչս անզօր է։ Դահլիճի անկիւնում խնդում էր Մոսկուլի ամենանշանաւոր Բիաբովի երաժշտական խումբը։ Շամպաճը վարար գետի պէս էր փրփրում ու թափւում։ Բաւց աչք բոլորը ոչինչ՝ համեմատած աչն սերւիդի հետ, որից հրաւիրալներս կերակուր էինք ուտում։ Աչք սերւիդը, որ մեր լեզուով «ամանջաւան» է նշանակում, կոչւում էր Մեծն Նապոլէօնի սերւիդ։ Ղարաբաղցի, Զով, Արմաւիրցի, Նախջևանցի և Մեծն Նապոլէօնի սերւիդ!... Ի՛նչ ներշաշնակութիւն, ի՛նչ պատկեր... Հաւ գիտի աշխարհակալ Նապոլէօն... Մի վեր կենար ու տեսնէր, թէ ի՛նչ օրն է ընկել ինքը... տեսնէր, թէ որքան առաջ է գնացել, որքան լուսաւորւել ու ճաշակով նրբացել է Ասիալում մեծացած հալը, որն արդէն քրեղանից ու տիփուռից ահագին թուիչքով անցել է Նապոլէօնեան սրբիզլին։ Եւ համոզւած եմ, որ Մեծն Նապոլէօնը ֆրանսիական քարտէզից ջնջելով Պարիզ, Մարսէլ, Լիօն անունները, տեղը կը դնէր Շուշի, Յշնա, Արմաւիր, Գորի, Նուխի։

Հարսանեաց ճաշկերուծի մէջ տեղին էինք հստած, երբ սկսեցին ճառարտութիւնները։ Ո՛վ չգիտէ, որ երբ հալի կադարը դաքանում է, լեզուն բլբուլ է կտրում, Գինու թասը ձեռքին՝ հալը իւր կեանքում ինչե՛ր ասես չի արել։ Նա բացել է ուսումնարաններ, առադածեռն մեկենաս է հանդիսացել ազադ հեղինակներին, նիւթապէս քաջալերել է հաւկական մամուլը... Մի խօսքով՝ նա դործել է, նա հիմնել է, նա օգնել է, նա իւր ունեցածը չի խնայել ազգի լաւաշխմութեան համար։ Իսկ միւս օրը, հէնց որ կադարը սառել է, նա իսկույն «հրաժարիմք» է ասել իւր բոլոր խոստումներին, իւր բոլոր բարի ձգտումներին... «Երեսելի հարսանիքին» ճառերն էլ, ինչ ասել կ'ուզի, որ երեսելի էին... Գովասանքներին վերջ չկար։ Ներբողեցին հարս ու փեսայն, ներբողեցին հարսնաքաղերներին, մէջ բերին և քաղցած որբերին, նկարագրեցին նրանց ներկալ աղէ-

դալի վիճակը, նկարագրեցին նրանց արտասուքով հեղեղած փխուր վաղբերը... Եւ ամեն մի ճառից չեղուց, հարսնքադէրերից մէկը շառնալով երաժշտական խմբին՝ կանչում էր. «давай музыка!», ուղում էր ասել «давай музыку» (տէք երաժշտութիւնը). կուշտ-կուշտ ճառեր, քաղցած որբեր, շամպայն ու որբերի արտասուքը, Ղըրդոց, երաժշտութիւն ու որբերի ճիշդ-աղաղակ... սրանից էլ լաւ հայրենասիրութիւն—մտածում էի ես և մոքումս փառք տալիս Աստուծուն, որ ալսքան առաջ են գնացել հայրենասիրական և բարեգործական ասպարէզների վրայ:

Մի ալ նմուշ հալկական հայրենասիրութեան. ֓եդրաւարի 25-ն անվիշտակելի չանցաւ և մայրաքաղաքի հալ կոլոնիալի կեանքում. Ալշնւիրական օրը մեր հալ beau-monde-ը չիշտակեց... Ղիմակահանղէսով: Վարղանանց րոն և Ղիմակահանղէս... Ի՞նչ կապ, ի՞նչ առնչութիւն կարող է լինել մէկի և միւրի մէջ, անշուշտ, զարացած ու զարմացած կը բացականչէ տղերիս ընթերցողը, Իրաւ որ, ի՞նչ կապ կարող է լինել աղօթքի և չիշոցի մէջ: Բայց պէտք չէ ոչ զարմանալ, ոչ զարանալ: Հալերիս մէջ կան մարղիկ, որոնց զլուխներն ալնպէս են շինւած, որ մէջը հեղտութեամբ տեղաւորում են ամեն տեսակ ծալրալեղութիւններ, ամեն տեսակ հակապարկերներ: Ալղպիսի մարղիկ ընղուակ են միաժամանակ և՛ հրեղտակ պաղտել, և՛ սաղանա, և՛ երղւել, և՛ սղել, և՛ աղօթել, և՛ չիշոց տալ... Դա էլ մի տեսակ շնորհ է, որ ամեն մարղու չի տւած: Ալղպիսիներից ազատ չէ և տեղական հալ կոլոնիան: Վարղանանց րոնին հալոց եկեղեցում, իհարկէ, պաղարագ կար, բայց, աւանղ, պաղարագը եկեղեցու պաղերի համար էր միաղն: Ամբողջ հալ կոլոնիալից ժամ էին եկած երկու ջուխտ ու մի կէնղ մարղ: Ալղ ջուխտ ու կէնղն էլ ուսանող, ուսանողի և երիտասարղ վաճառականներ էին: Կոլոնիալի աղա Ղասակարղը և խանում սեղը լալել չէին արել ազղալին ալղ ամենամեծ և խորղղատոր րոնին ժամ գալ: Մինղղեղ հէնց նողն օրը (երելի, ի չիշտակ Վարղանանց) տեղական կրեստոներից մէկի րանը Ղիմակահանղէս էր սարղւած և, ասում են, որ ասել զցելու տեղ չի եղել: Մեր հալ beau-monde-ը պարղէր համարել զանազան հագուստներով ու Ղիմակներով ներկալ գտնւելու ալնտեղ և մինչև առաւօտ պարելու ու զւարճանալու Պատում են, որ Ղիմակաւորներից մինը պարսիկ մողալի հագուստով է եղել և մեծ հիացմուք է պաղճառել ամենղին իւր հնարագղիտութեամբ:

Ներեղէք, ընթերցող, որ հէնց առաջին ֓եկլըտոնս ալնպէս րխուր սկսեղի ու րխուր վերջացղի. և ոչ մի ուրալի, մխիթարական բան չա-

սացի ձեզ, ի՛նչ արած. հալելին մեղաւոր չէ, երբ մէջը նաւորի երեսը ծուռ է. ալս շէպքում ես միայն հալելիի շէր եմ կապարում: Գուցէ, շուք կարծէք, որ ես գիտութեամբ եմ ներկերը թանձրացրել, որպէս զի պատկերն աւելի մռայլ շուրս գալ: Ընդհակառակը՝ եթէ ես գիտութեամբ մի բան արել եմ, աչդ աչն է՝ որ աշխատել եմ ներկերը մեղմացնել, սե ու մութ գոյներից խուս փալ: Ես մեղաւոր չեմ, որ ուղտին ծուռ վզիցն եմ սկսել նկարագրել: Խոստանում եմ ուրախութեամբ անցնել նրա մարմնի և ուրիշ մասերին: Նրանի չէ, աչդ մասերը աչք չլացնելու չափ սիրուն ու կոկ լինին. ամենաչն սիրով նրանց պատկերներն էլ կը փամ իմ ֆելլըֆոններում: Եւ, վերջապէս, համբերութիւն ունեցէք, ընթերցող ղեռ գրելու ու ասելու շատ բան կալ. սա խօսք ու զրուցիս սկիզբն է միայն: Մի մոռանաք, որ մտադրութեամբ ձեզ հետ Մոսկաւից է: Սրան աշմկալից մալրաքաղաք կ'ասեն: Ապտեղ ամեն մի քալափոխում ծիծաղն ու լացը, լուրջն ու հանաքը, թաշտմն ու հարսանիքը իրար են խառնւում: Եւ եթէ սաղ մնացի, ընթերցող, խոստանում եմ «Մուրճի» էջերում շարունակել ձեզ հետ իմ խօսք ու զրուցը աչդ բոլորի մասին: